Տեղեկություն Ֆինանսական օգնության մասին
Մենք կարող ենք օգնել ձեզ բժշկական հաշիվների վճարման հարցում:
Հնարավոր է, որ դուք իրավասու եք ստանալ բժշկական օգնություն

Մենք առաջարկում ենք՝

- Անվճար կամ մատչելի բուժծառայություններ իրավասու անձանց
- Անտոկոս, երկարաժամկետ վճարային փաթեթներ
- Օգնություն առողջապահական ապահովագրության ստացման հարցում

Իմացեք ավելին զեղչված վճարման և բարեգործական խնամքի ծրագրերի առկայության, ինչպես նաև դիմելու կարգի, իրավասության որոշման պայմանների և հիվանդանոցի զեղչված վճարումների և բարեգործական խնամքի քաղաքականության մասին այցելելով `http://www.providence.org/FinancialHelp?

Ֆինանսական օգնություն ստանալու իրավասությունը որոշվում է մի շարք չափանիշների հիման վրա, ներառյալ՝ ձեր բնակության վայրի, ձեր ընտանիքի անդամների քանակի և եկամտի հիման վրա: Մեր հաշվիչը (հասանելի է վերը նշված կայքում) օգտագործում է այդ տվյալներն՝ օգնելով հնարավոր իրավասությունը որոշելու հարցում: Կախված ձեր բնակության նահանգից և ընտանիքի անդամների քանակից, դուք, ամենայն հավանականությամբ, կարող եք դիմել օգնության, եթե ձեր համախառն տարեկան ընտանեկան եկամուտն ավելի ցածր է քան Դաշնային աղքատության շեմի 175-400%-ը:

Կամ սկանավորեք QR կոդը՝
[Ներառյալ ընթացիկ QR կոդը]

Դիմեք ֆինանսական խորհրդատուի
Պարզեք, թե ինչ ֆինանսական օգնության տարբերակներ են ձեզ հասանելի և օգնություն ստացեք մեր թիմից:
855-229-6466
Երկուշաբթի-ուրբաթ, ժամը՝ 7:00-ից՝ 17:30 Խաղաղօվկյանոսյան ժամանակով:

Գների թափանցիկություն
2018թ.-ին Medicare-ի և Medicaid-ի կենտրոնները թողարկել են ուղեցույց հիվանդանոցների համար՝ հորդորելով հանրայնացնել իրենց ստանդարտ գնացուցակն առցանց: Սակայն, հիվանդանոցային գնացուցակները չեն տրամադրում հիվանդների կողմից վճարման ենթակա վճարների լիարժեք պատկերը: Հուսով ենք, որ կօգտագործեք մեր գների հաշվարկման օգտակար հաշվիչը՝ ձեր գրպանից վճարման ենթակա ծախսերի հաշվարկման համար այստեղ՝
https://www.providence.org/billing-support/price-estimate

Գնման ենթակա ծառայությունների ցանկը ներկայացված է այստեղ՝
https://www.providence.org/billing-support/pricing-transparency

Հաշիվների վճարման օգնություն
Գոյություն ունեն սպառողների իրավունքներն անվճար ներկայացնող կազմակերպություններ, որոնք կօգնեն ձեզ հասկանալ հաշիվների ձևավորման և վճարման գործընթացը: Կարող եք զանգահարել Առողջապահության սպառողների դաշինք (Health Consumer Alliance) հետևյալ հեռախոսահամարով՝ 888-804-3536 կամ լրացուցիչ տեղեկությունների համար այցելել՝ healthconsumer.org:

Ի լրումն Providence-ի ֆինանսական օգնության ծրագրի, գոյություն ունեն բուժխնամքի ծախսերը նվազեցնելու կամ դրանք չկրելու այլ մատչելի տարբերակներ: Կարող ենք օգնել ձեզ դիմել Medicare, Medicaid, և այլ ծրագրեր, ինչպիսիք են Covered California և Medi-Cal, պայմանով որ դրանցից օգտվելու իրավասություն ունեք:

Հիվանդանոցային հաշիվների մասով բողոքի ներկայացման ծրագիր
Հիվանդանոցային հաշիվների մասով բողոքի ներկայացման ծրագիրը (Hospital Bill Complaint Program) պետական ծրագիր է, որը վերանայում է հիվանդանոցի որոշումներն այն մասին, թե արդյոք իրավասու եք ստանալ աջակցություն ձեր հիվանդանոցային հաշիվների վճարման հարցում: Եթե կարծում եք, որ սխալմամբ մերժել են ֆինանսական օգնության ձեր դիմումը, կարող եք բողոք ներկայացնել Հիվանդանոցային հաշիվների մասով բողոքի ներկայացման ծրագիր (Hospital Bill Complaint Program): Այցելեք՝ HospitalBillComplaintProgram.hcai.ca.gov լրացուցիչ տեղեկությունների և բողոք ներկայացնելու համար:

Թարգմանություն և մատչելի ձևաչափով փաստաթղթեր
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Եթե Ձեզ անհրաժեշտ է օգնություն ձեր նախընտրած լեզվով հաղորդակցվելու համար, զանգահարեք 1-888-311-9127 կամ այցելեք ձեզ մոտ գտնվող Providence հիվանդանոցային կլինիկա: Գրասենյակը բաց է ժամը 8:00-ից մինչև 16:30 և գտնվում է ֆինանսական խորհրդատվության գրասենյակում: Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի են աջակցություն և ծառայություններ, այդ թվում՝ փաստաթղթեր Բրայլ գրով, խոշոր տառաչափով, ձայնային կամ այլ մատչելի էլեկտրոնային ձևաչափերով: Այս բոլոր ծառայությունները տրամադրվում են անվճար: Թարգմանված փաստաթղթերի պատճենները հասանելի են այստեղ՝ www.providence.org/financialhelp